

ՍԱՂՄՈՍ 73

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ամբարիշտների վախճանը հակադրված արդարի վախճանի <u>MT ներածություն</u> Ասափի Սաղմոսը	Ամբարիշտների ողբերգությունը, և Աստծուն վստահության երանելիություն	Աստծո արդարության շուրջ խորհրդածություն	Աստծո արդարությունը	Արդարության հաղթանակը
73:1-9	73:1-3 73:4-9	73:1-3 73:4-9	73:1-3 73:4-14	73:1 73:2-3 73:4-5 73:6-7 73:8-9
73:10-14	73:10-14	73:10-14		73:10-12 73:13 73:14-15
73:15-20	73:15-17 73:18-20	73:15-20	73:15-17 73:18-20	73:16-18 73:19-20
73:21-24	73:21-24	73:21-26	73:21-26	73:21-22 73:23-24
73:25-28	73:25-26 73:27-28	73:27-28	73:27-28	73:25-26 73:27-28

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») *ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ա. Աստվիղ Դավթի պատասխանատվության տակ գտնվող Դևտական երգչախմբի խմբավարներից մեկն է (տես՝ 1 Մնաց. 25:1-9):
- Բ. Այս Սաղմոսը խոսում է ամբարիշտների բարգավաճման ակնհայտ անագնվության մասին և արդարի՝ տառապանքների: Այն խնդրին անդրադառնում է Աստծո արդարությունը պրոեկտելով ապագայի հանդերձյալ կյանքի մեջ:
- Գ. Սաղմոսը զարգացնում և տարածում է կյանքի վերաբերյալ ավանդական տեսակետը («երկու ճանապարհը»): համեմատեք 2 Օրինաց 27-28, 30:15-20, Սաղմոս 1, Առակ. 4:10-18, Մատթ. 7:13-14: Կյանքը անարդար է, սակայն Աստված այն կշռվի:
- Դ. Հորի գիրքը և Սաղմոս 37 գործ ունեն այս նույն խնդրի հետ, սակայն այս կյանքում: Սաղմոս 73-ի անդրադարձը Մատթեոս 25-ի լույսի ներքո է:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՏ. ՍԱՂՄՈՍ 73:1-9

- ¹Հիրավի Աստված բարի է Իսրայելի հանդեպ,
Այսինքն՝ նրանց, որ սրտով մաքուր են:
- ²Իսկ ինչ որ ինձ է վերաբերում, քիչ էր մնացել,
Որ իմ ոտքերը շեղվեին ու իմ քայլերը սայթաքեին:
- ³Քանի որ նախանձեցի անմիտներին,
Երբ տեսա ամբարիշտների բարգավաճումը .
- ⁴Քանի որ ցավ չունեն մինչև իրենց մահվան պահը,
Այլ նրանց մարմինը պարարտ է:
- ⁵Նրանք ուրիշ մարդկանց պես նեղության մեջ չեն
Եվ ուրիշ մարդկանց նման չեն տարջվում:
- ⁶Դրա համար հպարտությունը վզնոցի պես պատել է նրանց .
Բռնությունը որպես հագուստ ծածկում է նրանց,
⁷Նրանց աչքերը պարարտությունից դուրս են թռել .
Սրտի ուզածից ավելին ունեն:
- ⁸Փչացած են ու անօրինաբար են խոսում բռնության մասին,
Բարձրամտորեն են խոսում:
- ⁹Բերանները դնում են երկնքի դեմ,
Ու նրանց լեզուն երկրի մեջ է շրջում

73:1 «Հիրավի Աստված բարի է Իսրայելի հանդեպ» «Բարի» (BDB 373 II, #9) նշանակում է «բարեհամբույր» (տես՝ Սաղմ. 86:5, 145:9, Ողբ. 3:25): Մա այս Սաղմոսի ամփոփումն է և ՀԿ-ի հիմնական ենթադրությունը, սակայն Իսրայելում ոչ բոլոր մարդիկ են հավատքով (տես՝ Հռոմեացիների 9-11): Նույնը կարելի է ասել եկեղեցու մասին (տես՝ Մատթեոս 7, 13): Սաղմ. 73:15-ի անսովոր արտահայտությունը կարող է արտացոլել ճշմարիտ, հավատարիմ Իսրայելը:

Ուշադրություն դարձրե՛ք Աստծո «բարությանն» ավելացրած նշանակությունները՝

1. Նա բարի է բոլորի հանդեպ (տես՝ Սաղմ. 145:9)
2. Նրա բարությունը առաջին հերթին շնորհվում է ակն մարդկանց, ովքեր կանչում են Իրեն (տես՝ Սաղմ. 86:5):
3. Նա բարի է Իր հանդեպ (տես՝ Եզրաս 3:11, Սաղմ. 100:5, 106:1, 107:1, 118:1,29, 136:1, Երեմ. 33:11, Նաում 1:7):

Իսրայելի օրհնությունը հիմնված է՝

1. Աստծո հավիտենական փրկագործության նպատակի վրա՝ Աբրահամի սերնդով (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ)
2. Իր հետևորդների հավատքի փոխհարաբերության և ուխտի հնազանդության վրա
3. կարճաժամկետ ֆիզիկական օրհնությունները անհամեմատելի են (տես՝ Հռոմ. 8:18-25) -30, երկարաժամկետ, անձնական փոխհարաբերության հետ (տես՝ Հռոմ. 8:26-30,31-39): Համոզվե՛ք, որ ընտրեք երկարաժամկետը: Անմիջական հանգամանքները կարող են խաբուսիկ լինել:

❖ «**Իսրայելի հանդեպ**» NRSV և REB, ինչպես նաև Կաթոլիկ NAB տարբերակը, փոխել է «Իսրայելի հանդեպ»՝ לֵאשֵׁר־לִי (BDB 975) խոսքը «Աստծո շիտակի հանդեպ»՝ רָשִׁי־לֵא (BDB 449) ավելացրած BDB 42 II, #6):

❖ «**սրտով մաքուր**» Սա արտացոլում է մարդու շարժառիթները և վերաբերմունքը (տես՝ Սաղմ. 24:4-5, 51:10, Մատթ. 5:8):

73:2

NASB	« մոտ »
NKJV, NRSV, JPSOA	« գրեթե »
TEV	« մոտավորապես »
NJB	« քիչ էր մնացել »

Սա արտացոլում է Եբրայերեն ՄԱԿԲԱՅ BDB 589: Այն հստակ սահմանում է սաղմոսերգուի հավատքի ճգնաժամի լրջությունը: Նա Աստծո հետ իր վստահությունը, հավատը, երաշխիքը և խաղաղությունը կորցնելու ամենաեզրին էր: Հավատքի ճգնաժամերը պոտենցիալ՝

1. հույսի կործանարար կորուստ է,
2. գործության աղբյուրի և անման կորուստ են

Մենք բոլորս էլ գիտենք մարդկանց, ովքեր վերապրել են մեկը կամ մյուսը:

❖ «**շեղվեին . . . սայթաքեին**» Սա ապրելակերպի մասին սուրբգրային փոխաբերություն է: Ուղիղ, կայուն ճանապարհը արդարությունն էր (տես՝ Սաղմ. 40:2), իսկ ծուռումուռ, սայթաքուն ճանապարհը՝ ամբարշտությունը (տես՝ Սաղմ. 73:18, Առակ. 3:23): Կյանքի երկու տարբերակները այն է ինչ կոչվում է «երկու ճանապարհներ» (այսինքն՝ Սաղմոս 1 և 2 Օրինաց 30:15-20):

«Սայթաքել» թարգմանված տերմինը բառացի նշանակում է «թափվել» (BDB 1049, KB 1629, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՎԱՂԱԿԱՏԱՐ): Միայն այստեղ այն ունի թաց մակերևույթի վրա սայթաքելու նշանակությունը (պահանջվում է բանաստեղծական տողի հանգավորման համար՝ «շեղվել»):

Սաղմոս 73:3 հստակեցնում է խնդրի ոլորտը (այսինքն՝ նախանձը, խանդը):

73:3 «նախանձեցի անմիտներին . . . ամբարիշտների բարգավաճումը» Այս աշխարհը անարդար է: Եթե այս աշխարհը հենց այն է ինչ որ տեսնում ենք, Աստված է անարդար:

Սաղմոս 73:1-ի «սրտով մաքուրը» փորձվում են կյանքի անարդարությամբ: Ընդգծված ենթադրություն այն է, որ Աստված թույլ է տալիս այն, ինչը դատվելու է:

73:4-9 Այս համարները նկարագրում են Սաղմոս 73:3-ում նկարագրված մարդկանց ապրելակերպը (այսինքն՝ ամբարտավան և բարգավաճող, ամբարիշտ մարդիկ որոնք գտնվում են ուխտի համայնքում):

1. ցավ չունեն մինչև իրենց մահվան պահը
2. մարմինը պարարտ է, Սաղմ. 73:4բ, 7ա
3. արտաքին նեղություն չունեն
4. ցուցադրական հպարտ են, Սաղմ. 73:6ա, 8բ
5. բռնությունը որպես հազուստ ծածկում է նրանց
6. փչացած են և անօրինաբար են խոսում
7. բարձրամտորեն են խոսում, հպարտանում են իրենց չար գործերով անգամ Աստծո առջև, Սաղմ. 73:11

ՀԿ-ի աստվածաբանությունից (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30) բարգավաճումը Աստծուց օրհնություն էր հավատքի և հնազանդության համար (տես՝ Սաղմ. 73:10), սակայն այս մարդիկ այդ տեքստերը ծաղրում էին:

73:4 «ցավ չունեն մինչև իրենց մահվան պահը» Սա նշանակում է (1) պատվավոր թաղում են ունենում, կամ (2) նրանց մահը արագ է լինում և անցավ:

❖ **«ցավեր»** Եբրայերեն այս բառը (BDB 359) ՀԿ-ում միայն երկու անգամ է գործածվում, շատ տարբեր իմաստներով:

1. «շղթաներ» կամ «կապանքներ»՝ Եսայի 58:6 (ԵՉԱԿԻ)
2. «ցավեր»՝ Սաղմ. 73:4 (ՀՈԳՆԱԿԻ)

NET Աստվածաշունչը առաջարկում է՝

«Սա փոխաբերական իմաստով է կիրառվում ցավի և տառապանքի համար, որը արգելում է մարդուն վայելել կյանքը» (Էջ՝ 941):

Թինդեյլ Մեկնության գիրքը՝ Դերեք Քիդների կողմից (Էջ՝ 289, ծանոթագրություն #2) համաձայնում է RSV թարգմանության հետ, որը փոխում է «իրենց մահվան ժամանակ»՝ *מתו* խոսքը, երկու բառով՝ *מת ומל*, որի արդյունքում ստացվում է «նրանց համար ոչ մի ցավ չկա, առողջ և սլացիկ են իրենց մարմնով»: Սրան հետևում են NRSV և REB թարգմանությունները:

73:5

NASB, NKJV

«Նրանք ուրիշ մարդկանց պես նեղություն չեն կրում»

NJB

«մարդուն բաժին ընկած հոգսերից ազատ են»

JPSOA

«մարդկանց ծանր աշխատանքի մեջ մաս չեն կազմում»

Ամբարշտից կարծես թե խնայվել կյանքի նորմալ խնդիրները: Սա կարծես թե Աստծո գործը լինի: Սա հանդիսանում է «երկու ճանապարհի» հետ կապված աստվածաբանական խնդիրը (տես՝ Հոբմ Սաղմոս 73):

❖ **«տանջվել»** Այս տերմինը (BDB 619, KB 668, *Pual* ԱՆԿԱՏԱԲ) հաճախ կիրառվում է աստվածային պատժի համար (տես՝ Ծննդ. 12:17, 4 Թագ. 15:5, 2 Մնաց. 26:20, Եսայի 26:5, Հոբ 1:11, 2:5): Այն կարծես թե հենց Աստծո խոսքերն են (այսինքն՝ Ղևտացիների 26 2 Օրինաց 27-30, Սաղմոս 1) ամբարշտի ձախողման մասին: Սաղմ. 73:14-ում այս նույն բառը կիրառվում է սաղմոսերգուի մտավոր տանջանքի վերաբերյալ, որի պատճառը նրա սեփական կասկածներն էին:

73:6 Իրենց կյանքի փորձառությունների պատճառով (Սաղմ. 73:4-5) ամբարտավանը, հարուստը, առողջը, ուխտը խախտողները, իրենց անաստված կյանքերն ապրում են բաց, անգամ շողոքորթ կերպով (Սաղմ. 73:6-9):

73:7

NASB

«նրանց աչքերը պարարտությունից դուրս են թռել»

TEV

«նրանց սրտերը չարիք են դուրս թափում»

NJB
LXX
Peshitta
JPSOA

«նրանց ճարպից չարություն է արտահոսում»
«Նրանց անարդարությունը յուզի պես առաջ կգնա»
«Նրանց անօրենությունը յուզի պես է»
«Ճարպը փակում է նրանց աչքերը»

«Անօրենություն» գաղափարը LXX, Սիրիակ, Փեշիտտա և Վուլգատտա թարգմանություններից է: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 314) «նրանց աչքերը» խոսքը գնահատում է «C» (այսինքն՝ բավականին կասկածելի):

«անօրենություն» բառը מבוז է

«նրանց աչքերը» բառը՝ מביע

«Աչքերը» բառը ավելի լավ է համապատասխանում Սաղմ. 73:7-ի համատեքստին:

73:8 «ծաղրել» Սա ըստ երևույթին արամերեն տերմին է (BDB 558, KB 559) հանդիպում է ՀԿ-ում միայն այստեղ:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 73:10-14

¹⁰(Դրա համար էլ իր ժողովուրդն այստեղ է դառնալու

Ու լեցուն գավաթի ջրերը քամվելու են նրանց համար):

¹¹Ու ասում են, թե՛ «Աստված ինչպե՞ս կարող է գիտենալ,

Բարձրյալի մտա գիտություն կա՞»:

¹²Միս սրանք են անաստվածները, որոնք բարգավաճում են աշխարհում

Ու հարստություն են դիզում:

¹³Հիրավի զուր տեղը մաքրեցի իմ սիրտը

Ու իմ ձեռքերը լվացի անմեղությամբ,

¹⁴Քանի որ ամեն օր տանջվում եմ ու ամեն առավոտ՝ հանդիմանվում:

73:10 Այս համարը MT-ում անհայտ է: Համատեքստի ընթացքը ենթադրում է՝

1. ամբարիշտները բացասաբար են ազդել ուխտի մեջ գտնվող մյուս մարդկանց վրա (Կաթոլիկ Ավանդույթը կարծում է Սաղմ. 73:10 մեջբերում է ամբարիշտ իսրայելացիներից):
2. ամբարիշտները վատնում են հնարավոր բոլոր տեսակի բարիքները
3. ամբարիշտների հետևորդները հավատում են նրանց ամեն ասածին (NIDOTTE, հատոր 2, էջ՝ 1065):

Հիմնականում սա սաղմոսերգուի երկրնտրանքն է (դիլեմման): Նա տեսնում է ամբարտավան, հայհոյող, ուխտի մեջ գտնվող մարդու, որը ստանում է ուխտի բոլոր օգուտներն ու առատությունը: Այդ իսկ պատճառով նա հարցնում է Սաղմ. 73:13-ի հարցը: Մովսիսական ուխտի «եթե . . . ապա» (այսինքն՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30) կարծես թե ոչ մի ազդեցություն չունի: Կարծես թե աշխարհը «գլխիվայր է»:

AB, որին հետևում է NET Աստվածաշունչը, առաջարկում է առաջին տողում շտկում կատարել: Նրանք փոխում են «նա իր ժողովրդին վերադարձնելու է» (MT) խոսքը «նրանք հագնեալու են կերակուրով», որը կարծես թե ավելի լավ համագոր է հաջորդ տողի համար:

73:11 «Աստված ինչպե՞ս կարող է գիտենալ» Ամբարիշտը բացահայտ ամբարտավանություն և հայհոյություն է ցույցաբերում ՅԱՀՎԵԻ հանդեպ (տես՝ Սաղմ. 73:9):

Հրեական Սերտողության Աստվածաշունչը մի հետաքրքիր մեջբերում է կատարում (էջ՝ 1362):

«Հնագույն ժամանակներում այթեիստներ չեն եղել, միայն կարծիք կար, որ Աստված գիտության և զորության պակաս ունի» (տես՝ Սաղմ. 10:4, 11, 13, 94:7):

Կանխագիտության պակասի վերաբերյալ այս հայտարարությունը նորից հայտնվել է ժամանակակից «Բաց թեիզմ» աստվածաբանության մեջ: Անձամբ ես կարծում եմ, որ այս աստվածաբանությունը վերցրել է ՀԿ-յան գրական մոտեցում (այսինքն՝ Աստված հարցեր է տալիս, տես՝ Ծննդ. 3:9) և կիրառում այն որպես Աստվածաշնչի բոլոր տեքստերը գտելու համար ցանց: Սա «Չարգացող Թեիզմի» ձևի խմբագրված տեսակն է Ալֆրեդ Նորթ Ուայթհեդի կողմից:

❖ **«Բարձրյալ»** Սա երբայերեն *Էլիոն* (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ) անունն է: Այն գործածվում է Ծննդոց 14-ում (այսինքն՝ Մելքիսեդեկի անունը Աստծո համար) չորս անգամ և Սաղմոսներում՝ քսանմեկ անգամ, բայց միայն վեց անգամ ՀԿ-ի մնացած հատվածներում:

73:13 «Հիրավի զուր տեղը մաքրեցի իմ սիրտը» Սա արտացոլում է սաղմոսերգուի կասկածը Աստծո բարության և արդարության հանդեպ՝ խառնված «ինչ խղճալի վիճակում եմ ես» վերաբերմունքի հետ: Սա գրեթե արտացոլում է «ինչ օգուտ ինձ դրանից» վերաբերմունքը Հոր 1:6-12-ից:

Սա աստվածաբանորեն նման է Սատանայի մեղադրանքներին Հորի դեմ, որ նա ծառայում էր Աստծուն միայն այն բանի համար, որ Աստծո օրհնություններն ու պաշտպանությունն էր նրա հետ (այսինքն՝ հավատք բարիքների համար):

ՀԿ-ի «երկու ճանապարհները» կարծես թե հակադարձվել են: Այստեղ է որ «հավատարիմ հետևորդները» պետք է հիշեն, որ մենք սպրում ենք ընկած՝ մեղավոր աշխարհում: Սա այն աշխարհը չէ, որն Աստված ուզում էր տեսնել: ՀԿ-ի նպատակն էր մարդկանց ցույց տալ իրենց ըմբոստությունը և մեղքը (տես՝ Գաղատացիների 3):

Աստվածապաշտությունը և հավատարմությունը այս ընկած աշխարհում բերում են նախատինքն ու մերժվածություն (տես՝ Մատթ. 5:10-16), սակայն նոր օր է բացվելու (տես՝ Երեմ. 31:31-34, Եզեկ. 36:22-38):

❖ **«Հիրավի»** Այս ՄԱԿԲԱՅԸ (BDB 36) Սաղմոս 73:13 կիրառված «կասկածի» համար, Սաղմոս 73:18-ում դառնում է «հաստատում»: Սաղմոսերգուն զուր չէր ապրել արդար կյանքով, իսկ ամբարիշտները հնձելու են այն ինչ ցանել են (տես՝ Հոր 34:11, Սաղմ. 28:4, 62:12, Առակ. 24:12, Ժող. 12:14, Երեմ. 17:10, 32:19, ՆԿ-ի տեքստերի ամբողջական ցանկի համար տես՝ Գաղ. 6:7 առցանց):

❖ **«Իմ ձեռքերը լվացի անմեղությամբ»** Այս թարգմանությունը անշուշտ հավանական է, հիմնված՝

1. Սաղմոս 73-ի MT ներածության վրա
2. այս Ղևտական նկարագրության վրա
3. Սաղմոս 73:26-ում գոհաբերության «բաժին» տերմինի վրա

Հեղինակը հնարավոր է եղել է Ղևտացի կամ քահանա: Ձեռքերի լվացումը հանդիսանում էր տաճարի ձեռքերի մի մաս:

Համենայն դեպս այս դարձվածքը ավելի լայն նշանակություն է ստանում «աստվածահանո ապրելակերպի» համար (տես՝ 2 Օրինաց 21:6, Սաղմ. 26:6), ինչպես նաև ուշադրություն դարձրե՛ք Ծննդ. 20:5-ի դարձվածքին:

73:14 «Ամբողջ օրը» և «ամեն առավոտ» խոսքերի միջև գոյություն ունի զուգահեռականություն, և երկուսն էլ երկար ժամանակահատվածի վերաբերյալ դարձվածքներ են (այսինքն՝ կյանքի ընթացքը): Սաղմոսերգուն պահանջում է հավատարմության կյանք:

«Տանջվում եմ» (BDB 224, KB 243, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ համադրված BDB 619, KB 668, *Qal* ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԴԵՐԲԱՅԻ հետ) արտահայտության ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԸ ենթադրում է, որ ոչ միայն Աստված է թույլ տվել կամ արհամարհել ամբարիշտների գործողությունները և դրդապատճառները, այլ հավատարիմ սաղմոսերգուի հետ արել է այն, ինչը պետք է արվեր ամբարտավան, հայհոյող, անհավատարիմ ուխտավորներին: Սա այս ընկած աշխարհի դեպքերի առեղծվածն է: Սա այն աշխարհը չէ, որն Աստված էր ուզում տեսնել: Տեղի են ունենում այնպիսի բաներ, որոնք Աստծուց չեն: ՀԿ-ում միաստվածությունը սատարելու համար գոյություն ունի միայն պատճառ (տես՝ Ժող. 7:14, Եսայի 45:7, Ամովս 3:6), սակայն ավելի ուշ հայտնությունից մենք գիտենք, որ պատճառը դա չէ: Աստված թույլ է տվել իր սիրելի ստեղծագործությանը հնձելու Ծննդոց 3-ի սարսափելի հետևանքները: Բարի յուրն այն է՝

1. Որ ի վերջո Նա դա ուղղելու է (այսինքն՝ Նոր Դարաշրջանը)
2. Նա մեր հետ է այդ ամենի մեջ (տես՝ Սաղմոս 23):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 73:15-20

¹⁵Եթե ասեի. «Ես այսպես եմ խոսելու»,

Ահա, Քո զավակների սերնդին գայթակղության կմատնեի:

¹⁶Երբ խորհեցի սա իմանալու մասին,

Շատ ցավալի էր ինձ համար,

¹⁷Մինչև մտա Աստծո սրբարանը այն ժամանակ

Հասկացա նրանց վախճանը:

¹⁸Իսկպես Դու նրանց սայթաքուն տեղերում ես դրել.

Կործանման մեջ ես իջեցրել նրանց:

¹⁹Ինչպե՞ս հանկարծակի նրանք կործանման մատնվեցին,

Չարհուրանքով ամբողջովին սպառվեցին:

²⁰Ինչպես մի երագ, երբ մեկն արթնանում է,

Այնպես, ո՛վ ՏԵՐ, երբ արթնանաս,

Քաղաքի մեջ անարգելու ես նրանց պատկերը:

73:15-20 Այս պարբերությունն այս Սաղմոսի աստվածաբանական սիրտն է: Ուշադրություն դարձրե՛ք հիմնական կետերին՝

1. Հավատարիմ հետևորդները բացահայտ արտահայտում են իրենց կասկածը, իսկ շփոթությունը կարող է ուրիշ հավատացյալների վրա ազդել
2. Աստծո հետ հաղորդակցվելու վայրը և ժամանակը կարող են մեր շփոթությունը խաղաղեցնել
3. Ամբարիշտների բարգավաճումը անցողիկ է և Աստծո հետ առերեսվելու նրանց ժամանակը անշուշտ գալու է (տես՝ Սաղմ. 73:27):

Սա հաստատում է այն բանի, որ «երկու ճանապարհները» ամեն դեպքում վավեր են: Մենք հնձում ենք այն, ինչ ցանում են:

73:16 «Երբ խորհեցի սա իմանալու մասին» Ընկած, աշխարհիկ, ժամանակի մեջ սահմանափակված մարդկային մտածելակերպով Աստծո ճանապարհները հասկանալու մեր կարողությունը դատապարտված է ձախողման (տես՝ Առակ. 3:5բ, Եսայի 55:8-13, Կող. 2:8): Գիտությունը լավ է, սակայն վստահությունն ավելի լավ է:

73:17 «մինչև մտա Աստծո սրբարանը» «Սրբարան» բառը (BDB 874) ՀՈԳՆԱԿԻ է, որը մատնանշում է ամբողջ տաճարը կամ ՄԵԾԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻՆ: Երկրպագությունը օգնում էր սաղմոսերգուին հստակ տեսնել: Հավանաբար նա արհամարիել էր սա իր պայքարների ընթացքում:

❖ **«հասկացա նրանց վախճանը»** Հայտնությունը եկավ և նրա աչքերը բացվեցին ավելի մեծ պատկերի համար՝ նա նայեց ավելի երկար ժամանակահատվածի մեջ՝ ժամանակի մեջ և ժամանակից դուրս:

73:18-20 Ապստամբության հետևանքը միայն ահարկու մահը չէ, այլ նաև սարսափելի հավիտենությունը (տես՝ Մատթ. 25:31-46, Դուկաս 16:19-31, Հայտն. 20:11-15):

73:19 «Չարհուրանք» տերմինը (BDB 117) կարող է վերաբերել մահվանը (տես՝ Հոբ 18:11,14): AB Սաղմոսներում Միթչել Դահուդի կողմից, գտնում է երրայերեն շատ բառեր և դարձվածքներ, որոնք Ուգարտական կիրառության պատճառով կարող են լինել ստորգետնյա աշխարհի համար նկարագրություններ:

73:20 «երբ արթնանում է» ՆԱԽԴԻՐԸ և ԲԱՅԸ (רעב BDB 734, KB 802, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱՉ-ՍՈՒԹՅՈՒՆ) շտկվել է (LXX, Փեշիտտա, Վուլգատա) «քաղաք» բառի (רע, BDB 746 II): Սա կարող է նկատի ունենալ՝

1. «ուրվականների քաղաքը» (AB, այսինքն՝ *Շեղը*)

2. Երուսաղեմին վերաբերող խոսք (այսինքն՝ նրանք վտարվել են Աստծո ներկայությունից մեղքի պատճառով և/կամ գերության)

Աստծո քնից արթնանալու կամ գործի անցնելու համար Իր գահից վեր կենալու հասկացությունը ՀԿ-ում որպես փոխաբերական լեզու է՝ մատնանշելու Աստվածության ակնհայտ գործողությունների չգնալու կամ աշխարհիկ դեպքերի անարդարության վերաբերյալ առեղծվածը: Աստված Իրեն հայտնել է, սակայն ինչո՞ւ են Նրա խոստումները և մարդու իրավիճակները այսքան տարբեր:



NASB	«ձև»
NKJV, NJB, JPSOA	«պատկեր»
NRSV, LXX	«ուրվականներ»
Peshitta	«կռապաշտություն»

Այս բառը (BDB 853) հանդիպում է ՀԿ-ում միայն երկու անգամ (տես՝ այստեղ և Սաղմ. 39:6-ում): NIDOTTE հատոր 3, էջ՝ 810, առաջարկում է, որ սա մատնանշում է պատկեր կամ ստվեր: Հավանաբար սա գալիս է «խավար», «սև» (մեկ այլ ձև կարող էր լինել «մահվան շուքի ձորը», տես՝ Սաղմ. 23:4) բառերի համար կիրառվող որևէ ՀՄԱ արմատից:

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 73:21-24

- ²¹Այդպես իմ սիրտը ցավեց, ու իմ երիկամունքից խոցվեցի,
- ²²Այնքան հիմար էի ու տգետ, Քո առաջ անասունի պես էի:
- ²³Համենայն դեպս, ես շարունակ Քեզ հետ եմ,
- ²⁴Դու իմ աջ ձեռքն ես բռնում,
- ²⁴Դու ինձ առաջնորդելու ես Քո խորհրդով
- Ու վերջում փառքի մեջ ես ընդունելու ինձ:**

73:21 «ներսում» Սա բառացի նշանակում է «երիկամներ» (BDB 480): Երբայեցիները ստորին կոնքի օրգանները համարում էին որպես զգացմունքների (տես՝ Հոբ 19:27, Առակ.23:16) և մտավոր գործունեության վայրը (տես՝ Սաղմ. 16:7):

73:22 Կենդանիները չունեն բարոյականի զգացում: Մարդիկ են, որ ստեղծվել են Աստծո պատկերով ու նմանությամբ (այսինքն՝ Ծննդ. 1:26-27): Միայն նրանք ունեն բարոյական արժեքների հասկացողություն: Բարու և չարի գիտության ծառը Եդեմի Պարտեզում շեշտադրում էր այս բարոյական երկրնտրանքը (տես՝ Ծննդ. 3:8-13): Ինչ որ մեկի «անասուն» վայրի անվանելը նշանակում է, որ նա չունի բարոյական կողմնացույց կամ ուղղություն և պարզապես ապրում է կենդանիների նման (այսինքն՝ իրենց բնագոյային՝ անմիջական կարիքները կամ ցանկությունները հոգալու համար): Սաղմոսերգուն զգում էր, որ իր կասկածներն ու նախանձը իրեն ստիպում էր գործել այնպես, կարծես թե չէր ճանաչում Աստծուն (այսինքն՝ Սաղմ. 73:21-22): Բոլոր մարդիկ էլ անցնում են նմանօրինակ «պատշաճից ավելի ցածր» զգացողությունների միջով: Ծշմարիտ հավատացյալները այսպիսի ժամանակներից դուրս են գալիս ավելի ուժեղացած և ավելի վստահ Աստծո մեծ ողորմության և ներկայության վրա: Անպատշաճ վարքերը կարող են դառնալ ավելի մեծ հավատքի քայլ դնելու համար քարեր:

73:23-24 Աստծո օրհնություններն են՝

- 1. Մեր կյանքերում Նրա ներկայությունը (տես՝ Սաղմ. 73:28ա)
- 2. Նրա առաջնորդությունն ամեն օր (այսինքն՝ բռնում է սաղմոսերգուի «աջ ձեռքը»)
- 3. Նրա կողմից հիմա ընդունված լինելը
- 4. Նրա կողմից հավիտյանս ընդունված լինելը (տես՝ Սաղմոս 73:24-ի գրառումը)

73:24 Մեկնաբանները պետք է զգույշ լինեն ՆԿ-յան հայտնությունը ՀԿ-ի անորոշ տեքստերի մեջ ընդունելու հարցում: ՀԿ-յան տեքստեր կան, որոնք մատնանշում են Աստծո հետ ֆիզիկապես ապրելու ապագայի հույսը: Մակայն այս տեքստը դրանցից չէ:

1. «փառք» (BDB 458) բառը նկատի չունի երկինքը ՀԿ-ի որևէ հատվածում (տես՝ UBS *Չեռնասրկր*, էջ՝ 642, IVP Հիմնարար Մեկնության գիրք, էջ՝ 540):
2. «մեջ» ՆԱԽԴԻՐԸ տեքստում չկա (ՆԱԽԴԻՐ ընդհանրապես չկա): LXX ապահովում է «հետ» ՆԱԽԴԻՐՈՎ:
3. «փառքը» կարող է վերաբերել «պատիվ» բառին (տես՝ JPSOA, NRSV, Փեշիտտա), որը կարծես թե ամբարիշտների հետ էր, սակայն իրականում սաղմոսերգուի հետ էր Մյուս կողմից՝

1. «ընդունել» ԲԱՅԸ (BDB 542, KB 534, *Qal ԱՆԿԱՏԱՐ*) գործածվում է Ծննդ. 5:24-ում Ենովքի համար, որը տեղափոխվեց Աստծո ներկայության մեջ, ինչպես և Եղիան (տես՝ 4 Թագ. 2:3, 10-11)
2. «վերջում» ՄԱԿԲԱՅԸ (BDB 29) հանդիպում է Սաղմ. 73:24-ում, որը կարծես է մատնանշում է եզրափակիչ իրադարձությունը
3. «երկինքը» (BDB 1029, տես երկու ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ և ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ) նշվում է Սաղմ. 73:25-ում:
4. «հավիտյան» տերմինը գործախվում է Սաղմ. 73:26-ում հակադրված «նրանք, ովքեր հեռու են Քեզնից, կորչելու են»:

Հավատարիմ հետևորդների հույսն այն է, որ նրանք հավիտյան Աստծո հետ են լինելու (տես՝ Սաղմ. 23:6, 27:4-6): Այստեղ կարևորը «որտեղ» հարցը չէ, այլ «ով» հարցը: Մարդիկ ստեղծվել են Աստծո հետ փոխհարաբերվելու համար, ուրիշ ոչինչ դա չի անելու:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 73:25-28

²⁵Ո՛ւմ ունեմ երկնքում, բացի Քեզնից,
Երկրի վրա էլ Քեզանից բացի ոչ մեկին չեմ ուզում:
²⁶Իմ մարմինն ու իմ սիրտը թուլանում են,
Աստված իմ սրտի գործությունն է ու իմ բաժինն է հավիտյան:
²⁷Քանի որ, ահա նրանք, որ հեռու են Քեզնից, կորչելու են .
Դու կործանեցիր նրանց, որ շնություն են անում՝
Քեզնից հեռանալով:
²⁸Բայց Աստծուն մոտենալը բարի է ինձ համար:
Հույսս դրել եմ ՏԵՐ Աստծո վրա, որպեսզի Քո բոլոր գործերը հռչակեմ:

73:25 «Երկրի վրա էլ Քեզանից բացի ոչ մեկին չեմ ուզում» Աստված Ինքը մեր ամենամեծ կարիքն է: Մենք ստեղծվել ենք Նրա հետ փոխհարաբերվելու՝ հաղորդակցվելու համար (տես՝ Ծննդ. 1:26-27, 3:8):

Հնարավոր է, որ այս արտահայտությունը միակ ճշմարիտ Աստծուն ուխտի հավատարմության հաստատություն է: Սաղմոսերգուն պնդում է, որ նա երբեք կռապաշտության մեջ չի եղել («պոռնիկի պես վարվելը», այսինքն՝ կռապաշտությունը, Սաղմ. 73:27):

73:26 «Աստված է իմ գործությունը» Նրա անփոփոխությունը մեր հույսն է (տես՝ Սաղմ. 18:1-3, Սաղ. 3:6):

❖ **«Իմ բաժինն է հավիտյան»** Աստված Ինքը Ղևտացիների ժառանգությունն էր (տես՝ 2 Օրինաց 10:9, 12:12, 14:27,29, 18:1, Սաղմ. 16:5, Ողբ 3:24) և հիմա Նա է բոլոր հավատարիմ հետևորդների ժառանգությունը (տես՝ Գործք 15, Հռոմ. 2:28-29, Գաղատացիների 3):

73:27 «անհավատարիմ» Սա բառացի նշանակում է «պոռնկության գնալ» (BDB 275, KB 275, *Qal* ԴԵՐԲԱՅ): Սա բովանդակում է Աստծո որպես ամուսին լինելու գաղափարը (տես՝ Ովսեա 1-3): Նրան թողնելը հոգևոր շնություն է (տես՝ Ելից 34:15, Թվոց 15:39, Ովս. 4:12, 9:1):

73:28 «մոտենալը» Ուշադրություն դարձրեք «նրանք, որ հեռու են Քեզանից» (Սաղմ.73:27) և «Աստծուն մոտենալը» (Սաղմ. 73:28) արտահայտությունների հակադրությունը:

❖ **«Հույսս դրել եմ Տեր Աստծո վրա»** Աստծո անունն այստեղ *Աղոնայ ՅԱՀՎԵ* է: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

«Հույս» (BDB 340) բառի համար տես՝ Սաղմ. 5:11 գրառումը:

❖ **«որպեսզի Քո բոլոր գործերը հոչակեն»** Կարևոր է, որ հավատարիմ հետևորդները փոխանցեն այն, ինչ Աստված արել է իրենց համար: Սա Սաղմ. 73:15-ի հակառակն է:

Որոշ գիտնականներ այս Սաղմոսը դասակարգում են որպես «Իմաստության Սաղմոս», սակայն այս արտահայտությունը ակնարկում է, որ այն «Գովաբանության Սաղմոս» է: Այս ժանրի Սաղմոսներին բնորոշ տարրեր էին հանդիսանում գոհության վկայությունը և տանարում գոհ մատուցելը:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Սահմանե՛ք Սաղմ. 73:1-ի «բարի» բառը:
2. Ի՞նչ է նշանակում սրտով մաքուր լինել: (Սաղմոս 73:1)
3. Ինչո՞ւ է սաղմոսերգուն գրեթե կորցրել իր հավատքը, վստահությունը ՅԱՀՎԵԻ հանդեպ:
4. Ովքե՞ր են Սաղմոս 73:3-9-ում նկարագրված ամբարիշտները:
5. Ինչպե՞ս է Սաղմ. 73:13 զուգահեռվում Հոբ 1-2-ում Սատանայի զրպարտությունների հետ:
6. Ինչպե՞ս է սաղմոսերգուն խուսափում իր կասկածներից:
7. Թվարկե՛ք Սաղմ. 73:23-24 համարների օգուտները:
8. Արդյո՞ք Սաղմ. 73:25-26 խոսում է այս կյանքում կամ հանդերձյալ կյանքում վրեժխնդրության մասին: Ինչո՞ւ, ինչո՞ւ՝ ոչ:
9. Ի՞նչ է նշանակում Սաղմ. 73:28ա: